ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 26 >> ապրիլի 2014թ. N 35

ք. Արմավիր

2014 ԹՎԱԿԱՆԻ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>> ԵՎ <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<ա>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1354-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի ապրիլի 14-ի N 04/07.2/3906-14 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել 2014 թվականի <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Սայադյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Երևան քաղաքի <<N 105 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Սողոյանին (համաձայնությամբ), <<Գայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկազ Հարությունյանին (համաձայնությամբ) և <<Նորավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Ստեփանյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Սայադյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև 2014 թվականի մայիսի 20-ը և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2014 թվականի մայիսի «26»-ի
N 33 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Ն ա խ ա գ ա հ՝

Գ. Սայադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ա ն դ ա մ ն ե ր՝

Ա. Թովմասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ,

Ա. Թովմասյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ,

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ,

Վ. Միքայելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ